



ՎԱՅՆ ԱՌԱՋԻՆ

ԱՅՍՊԻՍԻ խորագրի մը ներքեւ իրաւացի կ'երեւի ինձ աշխարհէլ մարդկային կեանքի այն ժամանակամիջոցը, որ կը սկսի մարդուս յղացման վայրկենէն՝ մինչեւ բանավարութեան այն աստիճանն բացուիլը, որով մարդկային միտքը որոշ գաղափար մը կը կազմէ չարին և բարւոյն զանազանութեան վրայօք:

Մարդկային կեանքի վայրկեաններն իրարու հետ կապուած են ուրախութեան ու տրամուլեան՝ կարճ կամ երկար անընդհատ շղթայէ մը, որուն օղակներն իրարու հետ հիւսուած են՝ փոփոխակի ծիծաղէ և արցունքէ, որոնք միայն գերեզմանին մէջ կը դադրին մարդուս ընկերելէ:

Առանց ուզելու միջամտիս ըլլալ մարմնոյ ոգեւորման խնդրոյն՝ գիտական—իմաստասիրական—աստուածաբանական այլ և այլ կարծեաց և վճռոց, կը մտածեմ ես թէ՛ որքան սխալի բայց և տխրալի վայրկեան մ'է՛ աստուածաստեղծ ազատ և անարատ հոգւոյն համար՝ այն ըոպէն, յորում նա՛ հպատակելով նոյն արարչագործ հրամանին՝ կու գայ կ'ամփոփուի մարմնոյ տխրեղծութեան մէջ, այն նպատակաւ՝ որ այդ մարմինը իրեն հետ կենաց շրջանին զանազան բովերէն անցնելով՝ օր մ'ալ անվերջ կենաց երջանիկ վայելքին հասցնէ։ ... Ո՛հ, վսեմ հոգին՝ մարմնոյ մէջ բանտուած, բանականութիւնն՝ անբանականին հետ կապուած, լուսաւորը՝ խաւար զընդանի մէջ կալանաւորուած, զօրութիւնը՝ տկարութեան մէջ զսպուած . . . ինչպիսի տխրագոյն ազդեցութիւն չի գործեր՝ մարդկեղէն կենաց շղթային այս առաջին օղակը։

Այն, այդ խորհրդաւոր բնակարանին մէջ՝ մարդ կազմակերպուած՝ հոգեկան—մարմնական էակը ձայն չունի, այո՛, որ խօսի, որ ճչէ, և իրեն զգացած վիշտերը և ահաւիժ վիճակին տխուր կացութիւնը մեզի բացատրէ։ — Բայց չէ՛ որ նորա տեղ՝ այդ իւր բանտին պատերն են որ կը հեծեն և կ'աղաղակեն, երբ կը հասնի այն վայրկեանը՝ յորում ցաւոց ու հեծեծանաց երկունքով՝ պիտի պատառնի հզօրագոյն՝ բայց անլուր ճիչերէ էութեան մը, որ իւր ի գործ դրած ձգանց բուռն սաստկութիւնը վերջապէս պիտի կարենայ բացատրել լոյս աշխարհի՛ իրեն առաջին ճիչով, առաջին լացով, առաջին վայով։

Բայց ինչո՞ւ այդքան ճիգն և այդպիսի պատերազմ մը, ո՞վ թշուառ լացկան . . . — Միթէ՛ կ'արժէր այդքան ջանք ու տանջանք՝ դնելու համար զքեզ այնպիսի վիճակի մը մէջ, յորում քեզի նման բիրաւոր նախորդներդ կը տառապին կը հեծեն մինչեւ իրենց գերեզմանը, մինչեւ մօրերկրի այդ երկրորդ արգասղը, զոր առհասարակ ամէն ազգը և լեզուը հանգիստ կը կոչեն, բաղդատամբ այն վիճակին՝ զոր երկրաւոր կեանք կ'անուանեն։ Ինչո՞ւ ու-

րեմն բնագոյական այդ մոլուշն՝ դէպ ի կեանքը, դէպ ի լոյս աշխարհը դիմելու, քանի որ գերեզմանի՛ այդ մութ աշխարհի վիճակը՝ անոր քով հանգիստ կը դատուի, ըլլայ այդ մութ աշխարհը մարմնեղէն և կամ հոգեղէն արգանդ մը։

Ըսէ՛ ուրեմն, ո՞վ մանուկ դեռածին, ի՞նչ կու գաս փնտռելու երկրիս վրայ՝ քեզ նման թշուառներու ընկերութեան մէջ. . . . Աւաղ, դուն դեռ չես գիտեր թէ՛ ինչպիսի տարերքներէ կազմուած և սկզբունքներէ տուգորուած է այդ ընկերութիւնը, որ ոչ միայն պիտի չկարենայ զարգացնել ու կատարելագործել ըստ մէջը սերմանուած բնական և գերբնական ձիրքերը, այլ մանաւանդ թէ՛ զանոնք պիտի խանգարէ և ոչնչացնէ, երբ բանավարութիւնը՝ անոր վատթար բանականութեան հետ շօշափուի ու նենայ, երբ հոգւոյդ փայլուն ամբօնութիւնը՝ անոր հոգեկան սեւութիւններէն մրտաի. . .

Իրաւունք ունիս ուրեմն վայելու, խեղճ տղայ, երբ առաջին անգամ աչքերդ լուսոյ զուարթ ճառագայթները տեսած պահուն, այդ գեղեցիկ լուսոյն դէմ կանգնած կը նշմարեն միանգամայն մարդկային ընկերութեան մթին և տխուր աստեղները. . . և իսկոյն կը փակես դու զանոնք և կը ճշես. վա՛յ, ինչպիսի՛ գէշ աշխարհ մ'ի՞նկայ։

Այո՛, աշխարհը մ'ի՞նկար, ուր քեզի ա՛մենէն աւելի կարեկցողները՝ ըստ ծնողդ՝ կարծես թէ՛ երբեմն ըստ առաջին թշնամիներդ են, եսասեր անհոգներ, որոնց անձնահաճութեան արդէն դու ինքդ ալ արգասիք մ'ես՝ իրենց կամքէն անկախ . . . Իսկ թէ՛ այժմ զքեզ՝ այդ ստացուած արգասիքը՝ նոքա կը մնուցանեն և խնամեն, այն ալ իրենց շահախնդրութեան և սրտի հաճութեան զրդմամբն է, որովհետեւ դուն պիտի մատակարարես իրենց ապագայ օգուտը և սրտի մխիթարութիւնը, այնպէս՝ որ եթէ շուտով մեռնիս, ո՞վ դեռածին դու, կարճ ու մեղմ պիտի ըլլայ անոնց ցաւն ու սուգը, և որչափ աւելի զարգացած հասակի մէջ մեռնիս՝ այնքան ալ համեմատաբար երկար ու սաստիկ պիտի ըլլայ անոնց վիշտն և ողբկոծը։

Եւ եթէ նոյն իսկ ծնողացդ վրայ այս-
քան տիրած է եսամոլութիւնը, այսինքն
է՛ ամէն բանի յարգն ու սիրելութիւնը
իրենց քաղիւիք օգուտէն կշռելու զգացու-
մը, հետեւցուր ուրեմն թէ ֆիասցած մարդ-
կութեան մեծ մասը որքան անտարբեր
պիտի ըլլայ քու երջանկութեանդ հանդէպ:

Յիրաւի, զուցէ քաջ բարոյախօս մ'էր,
(Թէպէտ և ոչ զեղարուեստի և ազնուա-
խոհութեան ճաշակ ունեցող մը) այն թա-
տրերգակ քերթողն, որ թատերարեմին վը-
րայ ներկայացնել տուած է մօր մը եր-
կունքը և զաւակին ծնունդը, և վերջնոյս՝
անմիջապէս լեզու և դատումն տուած է,
և նորա աչքերը հոն՝ զինքը դիտող հան-
դիսականաց վրայ շրջաբոլոր պտըտցնել
տալէ վերջը, այդ դեռածին տղուն բերանը
դրած է հետեւեալ խօսքերը.

« Ո՛հ, մայրիկ, այս ինչ վատ տեղ ա-
ռաջնորդեցիր ինծի... չորս կողմն թշնա-
մի զազաններ կը նշմարեմ՝ որոնք աչքեր-
նին վրաս տնկած են ... Կը վախեմ, մայ-
րիկ . ատոնք գէշ արարածներ են, քեզի
պէս ինծի քաղցր չեն նայիր. քու սրտիդ
նման անկեղծ սիրտ չունին ... տե՛ս, ահա
այն օթեկին մէջ ... իսկ այն միւս օթեկին
մէջ »... Այսպէս մի առ մի հանդիսա-
կանաց փառաւորութիւնները թուարկելէն
վերջը, լի սարսափով կը դարձնէ երեսը
դէպ ի իւր մայրը և կը ճչէ այդ մանկիկը,
և բազուկները բացած՝ ահաբեկողի մը թա-
խանձանօք կը գոչէ ... « Մայրիկ, ազատէ
զիս այդ անգութ աչքերէն, անոնց զայ-
րագին սեւ սրտի կիրքերէն և սպառնացող
դէմքերու երեւութէն ... Մայրիկ, հոս ա-
ղէկ չէ. բաց քու արգանդդ, ես հոն կ'ու-
զեմ դառնալ, հոն աւելի երջանիկ էի »:

Բայց չափազանց իրապաշտ այս խօս-
քերու հեղինակէն աւելի, պիտի հարցը-
նեմ ես քեզի, ո՞վ դեռածին մանկիկ, հին
սրբազան իմաստասիրի մը բերնով, թէ
ծնանելէդ աւելի լաւագոյն չ'էր ուրեմն
քեզի, որը « Փակուէր մօրդ արգանդին դու-
որ, որով զուցէ ցաւը աչքերէդ մերժուէր ».

— Յուր. Գ. 10:

Ո՛հ, ոչ. ցաւոց մէջ գոյացած և շարուն-

անկուած էութիւն մ'անգամ՝ աւելի երջա-
նիկ է՝ քան թէ ոչէութիւնը: Դեռածին
մանկիկը իւր ներքսակիր ուժով՝ յաղթա-
կան գտնուած է այդ առաջին պատերազ-
մին մէջ. իսկ հիմայ՝ որ իբր արդիւնք իւր
յաղթութեան՝ լոյս աշխարհի վայելքը ձեռք
բերած է, հիմայ նա մեր օգնութեան կա-
րօտ է՝ որպէս զի իւր վերջին նպատակին
հասնի. հիմայ ճիշդն ու վայելքը իւր նը-
մանեաց օգնութիւնը խնդրելու աղերսներ
են աւելի՛ քան թէ տօգոհութեան ցոյցեր:

Այո՛, նա կը հայցէ մեր օգնութիւնը .
իսկ մենք պարտական ենք արդեօք իրեն
օգնելու. և մենք ըսելով՝ ոչ միայն տղուն
ծնողքը կ'ուզեմ հասկընալ, այլ նաեւ մարդ-
կային ընկերութիւնը:

Եթէ պարտական ենք, ո՞վ է այդ պարտ-
քը մեր վրայ դնողը:

Վերցուցէք մարդուն սրտէն կրօնական
համոզումը և զգացմունքը, և անոր հետե-
ւանք՝ արդարութեան և բարութեան գաղա-
փարը, ինչ ուրիշ աղբիւր պիտի կարենաք
գտնել, ուսկից բղխեցնել կարենաք տալ
այդ պարտականութեան սկզբունքը:

Բնական զուժը, ծնողական ինքնաշարժ
սէրը, զուցէ պատասխանեն ոմանք . . .
Այո՛, անձնասիրութիւնը, պիտի վրայ բե-
րեմ ևս ալ. վասն զի այդ բնական գիտի
և ծնողական սիրոյ սկզբնաղբիւրը անձնա-
սիրութիւնն է միայն, եթէ չունենայ իրեն
գերբնական ուրիշ աղբիւր մը՝ որ անձնա-
սիրութիւնը անձնազոհութեան փոխարկէ.
այդ գերբնական աղբիւրը կրօնն է միայն,
արդարութեան գաղափարն է:

Բնական զուժն և ծնողական կոչուած
սէրը՝ աւելի սրտի զգացման հետ կապուած
է և անով կը սնանի ու կ'ապրի մարդուս
մէջ՝ քան թէ մտքի համոզման հետ: Բայց
սրտի զգացմունքը՝ հաճոյք և վայելք կը
պատճառեն մի միայն զանոնք արտադրող
սրտին, և այդ անձնական ենթակայէն դուրս
չեն փոխանցեր՝ իրենց պատճառած վայել-
մունքը: Սակայն երբ երկու տարբեր աղ-
բիւրներէ, յառաջանան այդ սրտի զգաց-
մունքներն, յայն ատեն մէկ արբիւրէն գո-
յացած առաւելագոյն վայելքի ազդեցու-

թիւնը՝ պիտի գերազանցէ իման զմիւսինը. այնպէս՝ որ երբ առիթը ներկայանայ այդ երկու տարբեր աղբիւրներէն ազդուած ըզգացումներուն մէջ ընտրութիւն մ'ընեալու, մէկը թողլու և միւսին ետեւէն գնալու, հարկ պիտի ըլլայ ծնողի մը՝ մէկը միւսին զոհեալու. օրինակ իմի, անձին ճաշողջուութիւնն ու արտաքին դիմաց վայելչութիւնը պահպանելու զգացումը՝ աղուն լաւագոյն սնունդ տալու և խնամքով մեծցնելու զգացման պիտի պարտաւորի զոհեալու, և կամ փոխադարձը. և յայտնի է՝ որ պիտի զոհէ անշուշտ այն վայելից աղբիւրը՝ որ նուազագոյն ազդեցութիւն կը գործէ իր սեփական բերմանց, հաճոյից, դիւրութեանց, կամ մէկ խօսքով ըսեմ՝ իր անձնամոլութեան վրայ: Եւ այդ իւր ընթացքն ալ անպարտաւ պիտի կարենայ կատարել, ճանի որ իւր այդ անձնամոլութիւնը դատապարտող և պատժող գերագոյն սկզբունք մը չըլլայ, որ մտքի վրայ օրէնք մը դնէ՝ սանձելու անձնդիւրութեան միտումը: Եւ ինչ ուրիշ հեղինակութիւն՝ կրօնից և արդարութեան սկզբունքէն զատ՝ կրնայ այդ պարտքը մարդուս վրայ դնել:

Այո՛, մի միայն կրօնքն և արդարութիւնն են՝ որ կրնան մօր մը և հօր մը զուրցել. « Դուն պէտք է զոհեմ զքեզ՝ ըստ որդւոյդ երջանկութեան համար. պէտք է զրկեմ զքեզ ըստ սեփական զգացմանցդ գոհացումի տալէ, գոհացնելու համար ուրիշ էակ մը՝ որ ըստ օգնութեանդ կը կարօտի »: — Մի միայն կրօնք և արդարութիւն են՝ որ պիտի կարենան հրամայել նաեւ ընդհանուր մարդկութեան, թէ պիտի զոհես ըստ նիւթական և մտաւորական կարողութիւնդ՝ օգնելու համար այն էակներուն՝ որոնք զուրկ են ծնողաց օգնութենէն, և որոնք ըստ հոգեկան և մտաւորական գաղափարացդ զարգացման ապագայ շարունակողները պիտի ըլլան:

Վայ ուրեմն այն դժբախտ մանկիկներուն, որոնք ծնողք չեն կառավարուիր իրենց գործելու կերպերուն մէջ՝ անպական և արդարութեան սկզբունքներով... և բիւրիցս վայձայն թշուառ մանկիկներուն, ու

որոնք ծնողներէ զուրկ մնացած, կը գրտնուին այնպիսի մարդոց ընկերութեան մը մէջ, որոնց սիրելի չեն կրօնք և արդարութիւն... Այսպիսի մանկուանք զուրկ տեղ չհիշերով և արցունքներով՝ իրենց կարեւոր եղած նիւթական և բարոյական օգնութիւնը կը պաղատաբար մարդագազաններէն, որոնք ժաշը և թոյն, ախտ և հիւանդութիւն միայն պիտի մատակարարեն այդ փոքրիկներուն՝ որ անոնցմէ օգտուիլ կը թախանձեն:

Բայց ինչ է ուրեմն այդ մատաղ հասակին խնդրած օգնութիւնը՝ իրենց ծնողներէն և ընդհանուր մարդիկներէն, և ինչ պարտական են վերջիններս մատակարարելու անոնց երջանկութեան համար:

Երբեք զլիս կրնանք վերածել անոնց խնդիրը. նախ՝ միջոցներ, որով մարմինն զարգանայ, երկրորդ՝ որով մշտնեմն ճոխանայ, և երրորդ՝ որով հոգին ինչ ազնուանայ:

Սակայն տղայոց այս երեք տեսակ խնդիրներուն հանդէպ՝ ինչ է սովորաբար ծնողաց և մարդկային ընկերութեան ի գործ դրածը, եթէ ոչ՝ մերթ իսպառ անհոգութիւն և մերթ ալ թերակատար խնամաժողութիւն մը. որուն հետեւանք՝ յառաջ կու գայ կամ բոլորովին ապականեալ սերունդ մը, և կամ վերահորդութեան պէտք ունեցող մարդկութիւն մը, որ միշտ ախտաւոր և հիւանդ պիտի ապրի, և ոչ երբեք անվիշտ և քաջառողջ:

Կրօնական սկզբունքներէ և արդարութեան պահանջուած պարտաւորութեանց հանդէպ՝ ծնողաց և մարդկութեան ցոյց տուած ընթացքը՝ երբեմն անհոգութիւններ և երբեմն ալ եղեռնագործութիւններ են՝ կ'ըսեմ՝ իրական կեանքի մէջ:

Եւ եթէ ոչ այսպիսիք՝ ինչ պէտք է կուչել ուրեմն այն մայրերուն ընթացքը, որոնք տղաբերի հետեւանք ներդրութիւններն և կազդուութիւնն վերջը, որպէս զի ազատ մնան զանոնք իրենց առողջ կաթով սնուցանելու պարտքէն, որպէս զի իրենց նախկին գեղեցկութիւնը ձեռք բերեն, կը յանձնեն տղաքնին ստրնտուի մը դարման

տանկելուն, որ շատ անգամներ կամ քանի մը տղու միանգամայն ծծմայր ըլլալով՝ չ'ունենար բաւական սնունդ տալու հիւթ, և կամ գուցէ այդ տուած կաթին հետ կը փոխանցէ խեղճ երեխային նիւթական և կամ բարոյական ախտաւորութիւնները — Ինչ պէտք է անուանել այն հայրերուն կամ այն մարդկային ընկերութեան բռնած ընթացքը, որոնք իրենց անձնական մերթ աւելորդ և մերթ ալ փնասակար բերումները լիովին յագեցնելու միջոցներ կրնան գտնել, բայց չեն ուզեր մտածել միջոց գտնելու՝ որ կաթնտու զաւկի տէր մայրը և կամ ստընտունները լաւ սնունդ և հանգիստ կենցեղ ունենան, որպէս զի առատ և առողջ սնունդ կարենան տալ նաեւ իրենց կաթնկերներուն, թէ՛ առանձնական տներու մէջ և թէ՛ մօրէ գուրկ մնացած և ընկերութեան ծախքովը դարմանոցի մէջ խնամուող ծրծակներնեւ:

Ինչպիսի՞ պահարակելի կըշտում տալու է այն մայրերուն և ստընտուններուն, որոնք սուտ-խուժ ձեւանալով՝ կը թողուն որ խեղճ երեխան մաղկտուն ճիշերով՝ երկար երկար լայ ու լայ այնքան՝ մինչեւ որ լացի յող-նածութենէն ջղերը թմրութեան մէջ ինկնան, և սպառած ոյժը քնոյ մէջ ձեռք բերելու ստիպուի ... որպէս զի այդ փոքրիկ մարտիրոսին դահճ մայրն և կամ ստընտուն՝ գիշերը իրենց ջերմիկ անկողնէն կամ քաղցրիկ ըռնէն շատիպուին հրաժարելու և վեր կանգնելու, և կամ որպէս զի իրենց տնական պիտոյից համար՝ ձեռքերին ունեցած զբաղմունքնին ընդհատելով՝ խանգարումն չկրնն:

Ասոնց և նման եսամոլութեանց ինչ տեսակ անուն տալու է ուրեմն ... Թողլով մէկդի այն հարիւրաւոր անհոգութիւններն ու յիմար գործերնին՝ որ յառաջ կու գան ծնողաց և խնամածուաց տգիտութենէն, նախապաշարմունքներէն, կարճատուութիւններէն, միշտ ր փնաս նիւթական սնունդի և քաջառողջ մարմնոյ զարգացման խեղճ երեխային և ինչո՞ւ չաւելցնեմ՝ նաեւ ի փնաս անոր մտաւորական և բարոյական զարգացման, քանի որ քաջափորձ ճշմար-

տութեան մը հետեւանցով ըստած է. « Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ »:

Բայց ծնողաց և մարդկանց առ երեւիս յոցացած անհոգութեանց աւելի սարսափելին և եղեռնաւորը՝ տղոց մտաւորական և բարոյական զարգացման հակառակ բռնած ընթացքնուն մէջ կը կայանայ. երբ այդ տղեկները ծծէ կտրուելէ վերջը՝ անխնամ կը թողուին իրենց չորս-հինգ-վեց տարեկան հասակնուն մէջ. հասակ մը՝ որուն մէջ երեխան չկարծուածէն աւելի սուր դիտող մ'է, և յաճախ նաեւ ամենապարզ թթաւանքներուն մէջ՝ սուր ըրնաղատող մ'է մարդկային գործերուն և խօսքերուն: Եւ սակայն անխոհեմ և անբարեպաշտ ծնողներ՝ այդ հասակին ներկայութեան շատ անգամներ գարը և անբարոյական խօսքեր իրենց գրուցատուութեանց մէջ կը խառնեն, խեղկատակութիւններ իրենց շարժմանց և գործոց մէջ, զգուելի ցոփաբանութիւններ և ամբարշտ հայհոյանքներ՝ իրենց լպիրջ կիրքերուն արտայայտութեանց մէջ: Եւ եթէ մէկը յիշեցնելու ըլլայ իրենց՝ որ գէթ խնային անմեղ երեխային, և անոր դիմարդ քայ-թակելի գնացքը չբռնեն, անմիտ ծիծաղ մը կը փրցընեն յիշեցնողին միամտութեան վրայ, որ այդ հասակի երեխան ընդունակ կը համարի ըստածներուն ըմբռնողութեան. և կամ դեռ աւելի չարագոյն՝ իրենց ըրածներն ու ըսածները տղուն ալ կրկնել կուտան, և իրենց գուարճութեան նիւթ մը դարձնելով՝ կը քաջալերեն մանկիկը իրենց ծիծաղներով. — Եւ մի կարծե՛ք, ո՞վ ընթերցողներ, թէ ըսածներս կը վերաբերին միայն ռամիկ դասակարգին և կամ յայտնի ախտաւորներու մասնախմբի մը ... Դրժ-բախտաբար ոչ սակաւ անգամներ (ոչինչ նուազ հոգւոյ քան մտքի զայրութիւն) այսպիսի ցաւալից տեսարաններու ներկայ գտնուել եմ նաեւ պատուաւոր համարուած տուներու մէջ ... նաեւ բարեկեցիկ հոգակուած գերդաստաններու մէջ... ուր կրօնական երկիրաւորութիւնը, ուր Աստուծոյ վախը կատարելապէս թագաւորած չէ:

Այսպիսի տուներու մէջ, այո՛, տեսեք

եմ այդ երեք-չորս տարեկան տղաքները, որ իրենց խաթուն մօրը ճանչուորներու այցելութեան գնալուն խանգարումն չպատճառելու համար՝ կը յանձնուին օրն ի բուն աղախնոյ մը ձեռքը, որ շատ անգամ անոնց լացը դադրեցնելու իրեն հնարք մը կը գործադրէ՝ այնպիսի եղեռնական միջոց մը, որ խեղճ երեխան լալէ կը կտրէ, այո՛, բայց անոր ապագային մէջ յաւիտեան զինքը և նորա անհեռատես ծնողքը լացընելու վտանգին ենթարկելով:

Այսպիսի տներու մէջ տեսեր եմ կրքէ զայրացած էրիկներ, որ ոչ միայն տղոց աչքին առջև անգլխաբար ծեծեր են իրենց կիները, (ի հարկէ արժանաւորը այդպիսի էրիկներու՝ իրենց վարքութեամբով), այլ և փոքրիկ տղուն ալ հրամայեր են ձեռք վերցնելու և ծեծելու իրենց մայրը, երբ այդ փոքրիկը իրեն չարանճի գործերուն համար արժանի եղեր է մօրը սաստիկ և կամ ապուսկին: — Տեսեր եմ ուրիշ ծնողներ, որոնք տղային զարջ մակդիրներ փոխադարձաբար սովորեցուցեր են ըսելու իրենց հօր և մօրը և կամ դուր չեկած ուրիշ անձանց: — Տեսեր եմ նաև այնպիսի հրէշային ծնողներ, որ իրենց փոքրիկին աւրոշկական ըմպելիքներ են խմցուցեր, որպէս զի խեղճ երեխայ-գինովին ներկայացուցած տեսարանով զբօսնուն . . . Ո՛հ, կրկնակի մարդասպաններ:

Այդպիսի մարդկանց տներու մէջ . . . այդպիսի մարդագազանաց ըսեմ մանաւանդ բնակարաններու մէջ տեսեր եմ զայրութի և արտասուելու արժանի այնպիսի երեւոյթներ, որ . . . Բայց ի՞նչ օգուտ տեսածներս մի առ մի մէջ բերելէ, որոնք կրնան հասարակական ծնողքը, բայց եթէ ծնողքը և խնամածուաց ըով կրօնական բարեպաշտութեան կամ բողոքովին և կամ մասնական չգոյութենէ:

Քիչուա՞ն երեխաներ, ո՞վ անմեղ զոհեր ձեր ծնողաց և խնամածուաց ցուրտ հասարկութեան, դուք էք որ պիտի կրէք ձեր կեանքի շարունակութեան մէջ՝ անոնց այժմեան ձեզի հետ այդպիսի վարմանը դառն

հետեանքները . . . Եւ դուք պիտի ըլլաք փոխադարձաբար ձեր կարգն եկած ատեն՝ նաև ձեր սերընդեան խանգարիչներն, եթէ ընտիր դաստիարակութիւնը չյաջողի հակաշիւ և առաւելագոյն ազդեցութիւն մը ներգործելով ձեր մտքին վրայ, ազատել զձեզ ձեր նախնական ստանձնած անբարի սպաւորութիւններէն:

Այո՛, եթէ մարդկային ընկերութիւնը չ'ուզեր որ իր սերունդն ապագային մէջ հետզհետէ չարակերպի, այլասերի դէպ ի վատթարն և ֆեսասկարը, հարկ է որ կեղրոնացնէ իւր ուշադրութիւնը դարման տանելու այն ամէն չարեաց, որ առաջ կուգան ծնողաց և խնամածուաց անհոգութենէն, սգիտութենէն և անխղճութենէն՝ փոքրիկ անմեղներու նախնական տարիներուն մէջ:

Միակ դարմանը պիտի ըլլայ՝ կամ կրօնական սկզբունքներով ծնողներն ու խնամողներն ազնուացնել և պարտաճանաչ դարձնել, որպէս զի իրենց ազնուութիւնը փոխանցեն նաև իրենց զաւակաց՝ սկսեալ անոնց ամենաթաքաւ հասակէն, և կամ բաժնել մարդկային ազգի այդ ապագայ սերունդը՝ իրենց վատթար ծնողներէն և խնամածուներէն, և անոնց նիւթական-մտաւորական-բարոյական հոգն ու խնամքը յանձնել առողջ ձեռքերու և առողջ մտքերու և կրօնասէր ու կրթիչ սրտերու:

Առաջին դարմանին պարտքը կը ծանրանայ գլխաւորապէս հոգեւոր պաշտօնէից վրայ, որոնք իրենց սրբազան պարտք պիտի համարին ամէն բանէ աւելի Աստուծոյ վախն և արդարութեան սկզբունքները՝ ձեռքերնին եղած ամէն միջոցներով՝ տարածել և տպաւորել ծնողաց և խնամածուաց սրբութիւնն և մտքերնուն մէջ:

Երկրորդ դարմանին պարտքը կը ծանրանայ որ և իցէ տեղւոյ մը ընդհանուր մարդկային հասարակութեան վրայ, որ պէտք է ամէն միջոց ձեռք առնու, որպէս զի անխնամ և անտէր կաթնկերները սնուցուին լաւ կազմակերպուած դարմանոցներու մէջ, ուր բժիշկներէ քննուած և վերակայուած ստրնտուք զանոնք կերակրեն կա-

նոնաւոր ժամադրութեամբ և խնամքով . իսկ չորս-հինգ-վեց տարեկան երեխայից համար ալ՝ յարմար տեղւոյ մէջ և յարմարաւոր անձինքներու խնամոց ներքեւ և ամէն պէտք եղած կազմակերպութիւններով՝ բացուին կրթարան Մարկոցներ կամ Մանկապարտէզներ, ուր կրթուին և պատրաստուին ապագայ մարդկութեան երջանիկ սերունդ մը :

Բայց բիւր և բիւր երանի՜ ձեզի, ո՛վ բարեբախտ մանկիկներ, որ աչքերնիդ լոյս աշխարհի մէջ կը բանաց այնպիսի գերդաստանի մը մէջ, որուն ծնողքը ազնուաբարոյ և կրօնասէր, անձնանուէր և որդեսէր ըլլալու համար՝ պէտք չունին հոգեւոր պաշտօնէից յորդորակներուն և ուսուցչութեան, և որոնց ընտանի յարկը իրենց զաւակներէն ձեւացած սքանչելի հոգեծա-

ղիկ մանկիկներու ճշմարիտ ծաղկոց մ'է, որուն մէջ չար օրինակներէ հեռու՝ ամենօրեայ դասառութիւն մ'ունիք ազնուաբարոյ շարժմանց, խօսքի ու գործոց . . . Դուք, ո՛վ երջանկաբաստ փորձրիկներ, ներկայիս ձեր ծնողաց և ապագային ալ անոնց հետ միասին՝ ընդհանուր մարդկութեան երջանկութիւնը պիտի ըլլաք, և անոր վատթարութեան մէջ մեծցած թշուառ զաւակները պիտի մխիթարէք՝ մարդկութեան օգտին համար, և յատկապէս ձեր ազգայնոց օգտին համար ի գործ դնելիք ձեր անձնանուիրութիւններով . . . Ո՛հ, ձեր ծնունդը, ձեր երեխայութեան շրջանը՝ քնապիտի չկոչեմ ես ՎԱՅՆ — ԱՌԱՋԻՆ, այլ ՎԱՇՆ — ԱՌԱՋԻՆ :

Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ

Ա Ռ Ա Յ

Պ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ա Յ Պ Ա Տ Ա Ն Ի Ն Ե Ր

Ձմեռ ատեն՝ ձիւնը առատ բարդ է բարդ
Ծածկեց երկիր հասար ու հարթ .
Որուն արծաթ փռւոյն վերայ երկնավառ,
Շողան ակունք անհամար :
Մի քանի լուրջ պատանիներ
Ձիւնն ուղեւով անել իրենաց շահարեր,
Ժողովեցան ի մի խումբ,
Առին ակումբ :
Նոցամէ մինն աւելի փորձ՝ ընդունակ,
Ասաց — « Ի՛նչ գի՛ք ա՛ն աղագը .
Արե՛ք՝ ձիւնէն շինենք՝ ազատ ժամանակ :
Մի հոյակապ աշտարակ :
Թո՛ղ մեր ծննդք տեսնեն՝ որ մենք չեմք անփորձ,
Կանգնել, կերտել, ըստեղծել գործ » :
Ուրիշ մ'ասաց — « Ինչո՞ւ քարձըր աշտարակ .
Կ'ուզե՛ն որ մենք Բարեկեցի պէս խալտառակ .
Շըրժե՛ք տապալ յերկիր կործան՝
Ֆիր ու քան :
Լաւ է, շինեմք չըբէջ պալատ սինապարդ,
Տեսնէ ապշի աճէն մարդ » :
Երրորդ մ'ասաց — « Ի՛նչ ի՛նչ պաշտոն,
Լաւ է ամբողջ կամարապատ » :
Չորրորդն ասաց — « Ո՛հ, ի՛նչ ազատ՝ համարակ
Դուք կը շարքէք լայն և արձակ,
Այդպէս չուտով կ'ուզէ լինիլ սեռագործ,
Մի՛նչդեռ որ գու՛ք շատ տըգետ էք և անփորձ :
Աշխատեցէ՛ք՝ նախ ուրուագիծ մը շինել,

Ցատակագիծ գրե՛լ կազմել,
Չափել, հաշուել, անվերջապէ,
Որ ձեր գործը չըլնի դատարկ .
Ուստի թողունք մի քանի օր,
Պիտոյքները սարքներ բոլոր,
Յետոյ լինի՛ք թող ձեռնամուխ
Եւ քաջութեամբ հանենք զըլուխ » :
Հինգերորդը չըղիմացաւ, գարձաւ կերակ,
Եւ որտաց . « Ի՛նչ կը խօսէք երկար բարակ,
Եթէ կ'ուզէք անել մի բան՝
Ի՛նչ կարիք կայ թողնել վաղուան » :
Սորա բողոքն անտես թողնել անուշադիր,
Եւ ըսկըսան զըրել երկար ծըրագիր,
Գրծեցին մեն յատակագիծ
Եւ օրերով կից առ կից՝
Նըստան, խորհեցան, հաշուեցին երկար,
Վիճեցին անվիթ, կըռկ անդադար,
Աճին մէկին խօսքին կէսը
Էր իւր « Եւր » :
Երկարեցին գործը մինչեւ այն ժամին,
Որ գարունը հասաւ, փընց տաք քամին,
Ձիւնն հալեցաւ կորաւ անհետ,
Ուրուագիծը մընաց անպետ :
Խօսք և խորհուրդ երկար բարակ,
Շարեն միայն չըրեն կարգով,
Իսկ վըճական մի « եղիցի »
Կանգնէ չըբէջ եկեղեցի . . . :

Ա. ՆԱԻԲՍԵԳԻԱՆ